ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 27 նոյեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի

Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի

Ա. Պետրոսյանի

Քննության առնելով Արտակ Գևորգյանի և Դավիթ Հարությունյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Արտակ Գևորգյանը և Դավիթ Հարությունյանը դիմել են ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 09.11.2015թ.)՝ խնդրելով. ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի, 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթները՝ այնքանով, որքանով չեն նախատեսում բողոքաբերի կամքից անկախ պատճառներով բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով հարգելի համարելու՝ դատարանների պարտականությունը:

2. Դիմողները նշում են, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում առկա իրավակարգավորման համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք ներկայացնելու մեկամսյա ժամկետն սկսում է հոսել ակտը հրապարակելու պահից՝ այն դեպքում, երբ ակտն իր բովանդակային մասով բողոքաբերին հասանելի է դառնում հրապարակման օրվանից հետո որոշ ժամանակ անց: Այդ ժամանակահատվածում բողոքաբերը չունի այդ ակտը բողոքարկելու իրական հնարավորություն:

Ըստ դիմողների՝ «Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը բողոքարկելու համար օրենսդրությամբ սահմանված մեկամսյա ժամկետի փոխարեն ավելի քիչ ժամկետում այդ գործողությունը կատարելու պարտականություն սահմանելը և դա բողոքաբերների վրա դնելը դատարանի մատչելիության իրավունքի անհամաչափ սահմանափակում է: Նման սահմանափակումն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակարգում գործող դատական համակարգերին»:

3. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ.

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

4. Դիմողները միջնորդություն են ներկայացրել պետական տուրքի վճարումից ազատելու մասին:

5. ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմն արձանագրում է, որ ՀՀ սահմանադրական դատարանը 2015 թվականի սեպտեմբերի 8-ի ՍԴԱՈ-55 աշխատակարգային որոշմամբ քննության է ընդունել «Քաղաքացի Կարեն Հարությունյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի, 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ ՀՀ Սահմանադրությանը

համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը և գործի դատաքննությունն սկսելու օր է նշանակել 2015 թվականի դեկտեմբերի 15-ը:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32, 39 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Արտակ Գևորգյանի և Դավիթ Հարությունյանի անհատական դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի, 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:
2. Առաջարկել սույն գործը միավորել 2015 թվականի սեպտեմբերի 8-ի ՍԴԱՈ-55 աշխատակարգային որոշմամբ քննության ընդունված՝ «Քաղաքացի Կարեն Հարությունյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի, 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործին:
3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:
4. Բավարարել դիմողների միջնորդությունը և նրանց ազատել պետական տուրքի վճարումից:

Նախագահող՝

Անդամներ՝

27 նոյեմբերի 2015 թվականի
ՍԴԴԿՈ/2-21